



ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

25.05.2017թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

ՍՑ-ԳԲԽ-20/17

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ՍՑ-ԳԲԽ-20/17 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 23.03.2017թ. թիվ 03/73-3/5170-17 գրությամբ ներկայացված «Տիգման գրուպ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00890518) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը (այսուհետ նաև՝ ՍՑ-ԳԲԽ-20/17 բողոք), «Գնումների մասին» ՀՀ օրենքը (այսուհետև նաև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը (այսուհետ նաև՝ Կարգ), «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի 16.03.2017թ. թիվ Ե-029 և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը 22.12.2016թ. թիվ 03/73-3/28491-16 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ (այսուհետ նաև՝ Կենտրոն) խնդրելով ուսումնասիրել «Տիգման գրուպ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար՝ կից ներկայացնելով Երևանի

քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 12.12.2016թ. թիվ 01/61-28291 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում Կենտրոնի 10.03.2017թ. թիվ 02/04.1/866-17 եզրակացությամբ արձանագրել է, որ «Տիգման գրուպ» ՍՊԸ-ի կողմից 22.11.2016թ հայտի թիվ 2 հավելվածով ներկայացված հայտարարությունը հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում:

Կենտրոնը միաժամանակ տեղեկացրել է, որ խախտումը թույլ տալու պահից (22.11.2016թ.) հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից հայտ ներկայացնելը հիմք կհանդիսանա ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար, որի արդյունքում «Տիգման գրուպ» ՍՊԸ-ն կարող է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 23.03.2017թ. թիվ 03/73-3/5170-17 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի 16.03.2017թ. թիվ Ե-029 գրության համաձայն, վերջինիս կարիքների համար կազմակերպված գնման ընթացակարգին «Տիգման գրուպ» ՍՊԸ-ն 16.03.2017թ.-ին մասնակցության հայտ է ներկայացրել:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 124-րդ կետի 2-րդ ենթակետը՝ ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ անհրաժեշտ է նախաձեռնել նշված մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց:

2. «Տիգման գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Տիգման գրուպ» ՍՊԸ-ն 21.04.2017թ.-ին խորհրդին է ներկայացրել գրություն, համաձայն որի Ընկերությունը հայտնել է, որ կատարում է ճշգրտումներ ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր-Նորքի հարկային տեսչությունում և ՍՅ-ԳԲԽ-20/17 բողոքը քննող հանձնաժողովից խնդրում է 21.04.2017թ.-ի նիստը հետաձգել:

Ընկերությունը 18.05.2017թ.-ին խորհրդին է ներկայացրել գրություն, որով հայտնել է, որ Կենտրոնի 10.03.2017թ. գրությամբ տեղեկացել են, որ «Տիգման գրուպ» ՍՊԸ-ի կողմից

22.11.2016թ.-ին ներկայացրած հայտը դիտարկվել է որպես կեղծ տվյալ և որ Ընկերությունը կարող է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Այդ եզրակացությունը արվել է հիմք ընդունելով այն փաստը, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրը ունեցել է 1445228 ՀՀ դրամի պարտք:

Իրականում այդ պարտքը առաջացել է 24.11.2016թ.-ին Ընկերության կողմից ներկայացված հաշվետվությունների արդյունքում, որը հաստատվում է ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր-Նորքի հարկային տեսչության կողմից տրամադրված 22.03.2017թ.-ի գրությամբ:

Վերոհիշյալը վկայում է, որ մեր Ընկերության հայտը ներկայացնելու օրը՝ 22.11.2016թ.-ին հայտնելով և հավաստելով, որ չունի պարտք ՀՀ պետական բյուջեի նկատմամբ՝ չի ներկայացրել կեղծ տվյալ, քանի որ այդ գումարը գոյացել է **հայտը ներկայացնելու օրվանից հետո**՝ նոր հաշվետվություն ներկայացնելու արդյունքում:

3. «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը:

«Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ը 16.03.2017թ. թիվ Ե-029 գրությամբ՝ ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել «ԻԿՎԾԻԿ-ՇՀԱՊՁԲ-17/17» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Տիգման գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած անհրաժեշտ փաստաթղթերը:

«Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ը, պատշաճ ծանուցված լինելով «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 21.04.2017թ. ժամը 17:40-ին նշանակված նիստի օրվա, տեղի և ժամի մասին, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԳԲԽ-20/17 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 23.03.2017թ. թիվ 03/73-3/5170-17 գրությամբ ներկայացված «Տիգման գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն՝ Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված «ԵԲ-ՇՀԱՊՁԲ-17/12» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով ապրանքների ձեռքբերման ընթացակարգին մասնակցելու նպատակով **22.11.2016թ.** հայտ է ներկայացրել:

2. Պատվիրատուն, ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի 1-ին մասի դրույթներով, 02.12.2016թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում է ներկայացրել առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

3. ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը 08.12.2016թ. տրամադրել է եզրակացություն, համաձայն որի «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (**22.11.2016թ.**) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ **1,445,228 ՀՀ դրամի չափով:**

4. ՀՀ ֆինանսների նախարարությունը 22.12.2016թ. թիվ 03/73-3/28491-16 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ անհրաժեշտ է սահմանված կարգով նախաձեռնել «Տիգման գրուպ» ՍՊԸ-ին Ցուցակում ներառելու գործընթաց:

5. Կենտրոնը 07.02.2017թ. թիվ 01/04.1/361-17 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ ՊԵԿ, խնդրելով հայտնել՝ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի 22.11.2016թ (Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵԲ-ՇՀԱՊՁԲ-17/12» ընթացակարգի մասնակցության հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

6. Ի պատասխան վերոնշյալ հարցմանը ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից 06.03.2017թ. ստացվել է պատասխան, ըստ որի Ընկերությունը 22.11.2016թ. դրությամբ ունեցել է **1.445.228 ՀՀ դրամ** ժամկետանց հարկային պարտավորություն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:

7. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում Կենտրոնի 10.03.2017թ. թիվ 02/04.1/866-17 եզրակացությամբ արձանագրել է, որ «Տիգման գրուպ» ՍՊԸ-ի կողմից 22.11.2016թ հայտի թիվ 2 հավելվածով ներկայացված հայտարարությունը հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում:

8. «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ- 16.03.2017թ. թիվ Ե-029 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնել է, որ

վերջինիս կարիքների համար կազմակերպված գնման ընթացակարգին «Տիգման գրուպ» ՍՊԸ-ն 16.03.2017թ.-ին մասնակցության հայտ է ներկայացրել:

9. ՀՀ ֆինանսների նախարարությունը 23.03.2017թ. թիվ 03/73-3/5170-17 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 124-րդ կետի երկրորդ ենթակետը՝ ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ անհրաժեշտ է նախաձեռնել «Տիգման գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց:

10. ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր-Նորքի հարկային տեսչության կողմից 22.03.2017թ. գրությամբ հայտնել է, որ ի պատասխան «Տիգման գրուպ» ՍՊԸ-ի կողմից Նոր-Նորքի հարկային տեսչություն ներկայացված դիմումի՝ 22.11.2016թ. դրությամբ Ընկերության 1445228 ՀՀ դրամի հարկային պարտավորությունը, այդ թվում շրջանառության հարկի գծով 1356327 ՀՀ դրամի, եկամտային հարկի գծով 88337 ՀՀ դրամի չափով առաջացել են 24.11.2016թ.-ին Ընկերության կողմից ներկայացված հաշվետվությունների արդյունքում:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

«Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն՝ Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված «ԵԲ-ՇՀԱՊՁԲ-17/12» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով ապրանքների ձեռքբերման ընթացակարգին մասնակցելու նպատակով **22.11.2016թ.** հայտ է ներկայացրել:

Պատվիրատուն, ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի 1-ին մասի դրույթներով, 02.12.2016թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում է ներկայացրել առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը 08.12.2016թ. տրամադրել է եզրակացություն, համաձայն որի «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (22.11.2016թ.) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ **1,445,228 ՀՀ դրամի չափով:**

ՀՀ ֆինանսների նախարարությունը 22.12.2016թ. թիվ 03/73-3/28491-16 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ անհրաժեշտ է սահմանված կարգով նախաձեռնել «Տիգման գրուպ» ՍՊԸ-ին Ցուցակում ներառելու գործընթաց:

Կենտրոնը 07.02.2017թ. թիվ 01/04.1/361-17 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ ՊԵԿ, խնդրելով հայտնել՝ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի 22.11.2016թ (Երևանի քաղաապետարանի կողմից կազմակերպված «ԵԲ-ՇՀԱՊՁԲ-17/12» ընթացակարգի մասնակցության հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ի պատասխան վերոնշյալ հարցմանը ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից 06.03.2017թ. ստացվել է պատասխան, ըստ որի Ընկերությունը 22.11.2016թ. դրությամբ ունեցել է **1.445.228 ՀՀ դրամ** ժամկետանց հարկային պարտավորություն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում Կենտրոնի 10.03.2017թ. թիվ 02/04.1/866-17 եզրակացությամբ արձանագրել է, որ «Տիգման գրուպ» ՍՊԸ-ի կողմից 22.11.2016թ հայտի թիվ 2 հավելվածով ներկայացված հայտարարությունը հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում:

Կենտրոնը միաժամանակ տեղեկացրել է, որ խախտումը թույլ տալու պահից **22.11.2016թ-ից** հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից հայտ ներկայացնելը հիմք կհանդիսանա ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար, որի արդյունքում «Տիգման գրուպ» ՍՊԸ-ն կարող է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 23.03.2017թ. թիվ 03/73-3/5170-17 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի 16.03.2017թ. թիվ Ե-029 գրության համաձայն, վերջինիս

կարիքների համար կազմակերպված գնման ընթացակարգին «Տիգման գրուպ» ՍՊԸ-ն 16.03.2017թ.-ին մասնակցության հայտ է ներկայացրել, և որ անհրաժեշտ է սահմանված կարգով նախաձեռնել «Տիգման գրուպ» ՍՊԸին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց:

Ընկերությունը 18.05.2017թ.-ին Խորհրդին է ներկայացրել գրություն, որով հայտնել է, որ Կենտրոնի 10.03.2017թ. գրությամբ տեղեկացել են, որ «Տիգման գրուպ» ՍՊԸ-ի կողմից 22.11.2016թ.-ին ներկայացրած հայտը դիտարկվել է որպես կեղծ տվյալ և որ Ընկերությունը կարող է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Այդ եզրակացությունը արվել է հիմք ընդունելով այն փաստը, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրը ունեցել է 1445228 ՀՀ դրամի պարտք:

Ընկերությունը 18.05.2017թ. ժամը 16:15-ին տեղի ունեցած ՍՑ-ԳԲԽ-20/17 բողոքը քննող հանձնաժողովի նիստի ժամանակ Խորհրդին է ներկայացրել ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր-Նորքի հարկային տեսչության կողմից 22.03.2017թ.-ի գրությունը, համաձայն որի՝ Ընկերության կողմից 21.03.2017թ.-ին Նոր-Նորքի հարկային տեսչություն ներկայացրած դիմումին ի պատասխան՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր-Նորքի հարկային տեսչությունը հայտնել է, որ 22.11.2016թ. դրությամբ Ընկերության 1445228 ՀՀ դրամի հարկային պարտավորությունը, այդ թվում շրջանառության հարկի գծով 1356327 ՀՀ դրամի, եկամտային հարկի գծով 88337 դրամի չափով առաջացել են **24.11.2016թ.-ին** Ընկերության կողմից ներկայացված հաշվետվությունների արդյունքում:

Այսպիսով, ըստ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի Նոր-Նորքի հարկային տեսչության կողմից 22.03.2017թ.-ի գրության պարզ է դառնում, որ «Տիգման գրուպ» ՍՊԸ-ն 22.11.2016թ.-ի դրությամբ չի ունեցել հարկային պարտավորություն և ըստ ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր-Նորքի հարկային տեսչության կողմից 22.03.2017թ.-ի գրության՝ 1445228 ՀՀ դրամի հարկային պարտավորությունը, որը նշված է ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի 08.12.2016թ. տրամադրված եզրակացությամբ՝ առաջացել է Ընկերության կողմից 24.11.2016թ.-ին (այսինքն հայտը ներկայացնելու օրվանից հետո) նոր հաշվետվություն ներկայացնելու արդյունքում:

Խորհուրդը գտնում է, որ նման պայմաններում հայտը ներկայացնելու օրը՝ 22.11.2016թ. ներկայացրած հավելված 2-ով Ընկերությունը չի ներկայացրել կեղծ տվյալ, ուստի թույլ չի տվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի խախտում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասով ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 23.03.2017թ. թիվ 03/73-3/5170-17 գրության հիման վրա «Տիգման գրուպ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00890518) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու նպատակով գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնված ընթացակարգը մերժել և «Տիգման գրուպ» ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝



Լուսինե Ոսկանյան

Անդամ՝



Հայկ Կոչեցյան